

Q-36

ՖԵԹ-ԱԼԻ ԱԽՈՒԽԴ-ԶԱԴԵ

ԿԱՐԱՎԱՐ ԱՄԱՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՎԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ. 1928

834-362

4-36

894.362  
Ա - 36

ՏԵՐ-ԱԼԻ ԱԽՈՒՆԴ-ԶԱՐԵ

# ԽԱԲՎԱԾ ԱՍՏՂԵՐ

---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ՅԵՐԵՎԱՆ. 1928

## ՄԻՐԶԱ-ՖԵԹ-ԱԼԻ ԱԽՈՒՆԴ-ԶԱԴԵ

(Ծնվել է 1812 թ., մեռել է 1878 թ. մայիսի 28-ին)

ԿՅԱՆՔՆ ԱԽ ՍՏԵՎԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻ

Այս գրքի հեղինակը՝ Միրզա-Ֆեթ-Ալի Ախունդ-զադեն հանդիսանում է Ազգրեջանի թյուրքերի գրականության մեջ ամենահայող ստեղծագործողներից մեկը:

Նրա ստեղծագործության թե ուժի և թե հիմնական մոտիվների մասին ընթերցողը կարող է գտանել հայերեն թարգմանված նրա «Խարգած աստղեր» գրքի հիման վրայ վորը նրա մյուս աշխատություններից ամենաբնորոշչին և, լինելով միաժամանակ և գրականն ու ամենալավը այդ աշխատություններից: Ներկա հոգածածով մենք նպատակ ունենք տալ հայ ընթերցողին գոնե համառոտ տեղեկություններ Ախունդ-զադեի մասին:

Միրզա-Ֆեթ-Ալին ծնվել է 1812 թվին Նուխի քաղաքում<sup>1</sup>, նրա հայրը՝ Մամեդ-Թաղին մինչև 1811 թվականը, ինչպես, ի մի վեց ալլոց, նաև նրա ամբողջ տոհմը, ապրում եր Թավրիզում (Պարսկական Ազրբյան) և պարապում եր առևտրով: Ազգությամբ նա պարսիկ եր:

Նույն այդ 1811 թվին Մամեդ-Թաղին առևտրական նպատակով գալիս ե Նուխի, և տեղը նրան այնքան և դուր գալիս, վոր գաղթում ե Նուխի: Այսուեղ նա յերկրորդ անգամ ամուսնանում է մի նուխեցի աղջկա հետ: Միրզա-Ֆեթ-Ալին ծնվել է նրա այս յերկրորդ կնոջից:

Կարծեմ 1814 թվին, մի զեպքի պատճառով, Միրզա-Ֆեթ-Ալու հայրը թեև վերադառնում է իր հայրենիքը, բայց Միրզա-Ֆեթ-Ալու մայրը չի կարողանում հաշտվել Մամեդ-Թաղու Թավրիզում մասցած առաջին կնոջ հետ և այսպիսով համոզում իր ամուսնուն յետ ուղարկել իրեն իր վորդու հետ Նուխի իր հորեղբայր Մոլլա-Հաջի-Ալի-Ասկարի մոտ:

<sup>1</sup> Նուխին գտնվում է Կովկասյան սարերի հարավ-արևելյան կողմում, անտիկ Շաքիի խանության մայրաքաղաքն է: Նուխին այժմյան Ազրբյանի մեջ գավառական քաղաքներից մեկն է:

3298-91

Միրզա-Ֆեթ-Ալին այդ ժամանակվանից նորից վերադառնալով Աղքաբեջան, այս վոչ մի անգամ չի տեսնվում իր խոհական հոր հետ և մնում է Մոլլալի մոտ, վորին նա այնուհետև միշտ անվանում է «իմ լերկորոր հայր»: Անզավակ Մոլլան նրան վորդեգրում և և իր անմիջական ղեկավարության տակ սովորեցնում է Ֆեթ-Ալուն պարսկերեն, թուրքերեն և արաբերեն լեզուներ, այն չափով, վոր փոքրիկ Ֆեթ-Ալին հրաշալի կերտով կարդում, դրում և խոսում և այդ լեզուներով: Ֆեթ-Ալին «իր լերկորոր հոր» ցանկության և խրախուսանքների ազգեցության տակ միանգամայն լուրջ կերպով պատրաստում եր մոլլա դաշնալու:

1833 թիվին նրա «լերկորոր հայրը» գնալու լեր Մեկկա և այդ պատճառով ել նա Ֆեթ-Ալու հետագա կրթությունն ու ուսումը հանձնարարեց մի վոմն «Մոլլա-Հուսեիլին Գյանջինսկու», վորը նույնչափ գիտնական եր, վորքան և ինքը:

Բայց այստեղ Ֆեթ-Ալու կյանքի մեջ մի խոշոր անցք տեղի ունեցավ, վորը հիմնովին փոխեց նրա ապագան: Մինչ «լերկորոր հայրը» Մեկկայում եր, Ֆեթ-Ալին համդիպեց և բավական արագ կերպով մոտեցավ հայտնի բանաստեղծ և փիլիսոփա «Միրզա-Շահու» հետ<sup>2</sup>, և իր ժամանակի այս առաջալոր գիտնականը վոչ միայն համոզեց Ֆեթ-Ալուն հրաժարվել իր հոգեորական դառնալու մտքից, այս դարձրեց նրան հետագայում խլամի, ինչպես և ընդհանրապես կրոնի լերբեք չթուրացող հակառակորդ:

Միքանի ժամանակից հետո վերադարձավ Հաջի-Մոլլա-Ալի-Ալիարը: Միրզա-Ալուն սաստիկ սիրող և նրա ապագային վերաբերող բոլոր հարցերի նկատմամբ սառնասիրու չեղող այս հոգեորականը, ծանոթանալով Միրզա-Ալու իր ապագա կյանքի վերաբերմամբ ունեցած հետանկարների հետ, Միրզալի վերաբերմամբ այն սատիճան դրական դիրք բռնեց, վոր թուլ տվեց նրան սովորելու նույնում նոր բացված «ոռու-թուրքական» քաղաքաւին՝ դպրոցում և շնորհիվ իր ջանքերի հաջողեցրեց նշանակել տալու Միրզա-Ալուն Կողկասի փոխարքալի դիվանում վորպես թարգման: Միրզա-Ալին մինչև իր կյանքի վերջն ել մնաց այդ ծառալության մեջ:

<sup>2</sup> Միրզա-Շահու հիվինակությունները վերին սատիճանի տաղանդավոր են և այդ պատճառով ել զերմանացի հայտնի բանաստեղծ (Կովկասում և Ռւսական նախում հանագարհորդող) Յողհնշտեղուի մի փոքր ազատ թարգմանությունները գերմաներեն լեզվով 200-ից ավելի հրաժարակություններեն ունեցել. սրանից ել Միրզա-Շահու «գաղելները» թարգմանվել են անգլիերեն, Փրանսերեն, իտալերեն, ռուսերեն և այլ լեզուներով, մինչև իսկ ինչ հրաշական լեզվով: Միրզա-Շահու ապրել եշտ շքափոր գրության մեջ, պահպանելով իր զայությունը մանկավարժությամբ: Ի միջի այլոց դասավանդել և արևելյան լեզուներ Թիֆլիսի մանկավարժական ինստիտուտում:

Այդ պաշտոնի մեջ մնալը Միրզա-Ֆեթ-Ալի Սիսունդ-զադեյի կուանքի մեջ խոշոր հեղաշրջում առաջ բերեց: հիմնավոր կերպով սովորելով ոռուսերեն լեզվով մնացել են նրանից միքանի բանաստեղծություններ, վորպիսիքը նա գրել և, որինակի համար, Պուշկինի մահվան առթիվ և այլն), նա բացառիկ լարվածությամբ վրապիսմ և ինքնազարգացմամբ: Նա իր ինքնազարգացման աշխատանքների առանցքը զարձրեց մահմետական Սրբալիքի սոցիալ-կուլտուրական խնդիրների ուսումնասիրությունը և, վորպես հենց ինքն ել այդ միջավարիքի ծնունդ, իր աթեհիզմն ու հակալղերականությունը նշանակալից չափով առաջ տարավ, զգեստավորելով այդպիսիները ժամանակակից լեկուպաշկան գիտական աշխարհայցքի պատճառաբանության հանգերձնությունը: Ախունդ-զազեն իր կանքի վերջում «Ճմարտության հարտնաբերեց» անունով մի գիրք և գրել վորը պարունակում է վերոհիշալ ինքնիրների նրա բազմամյա և բարեխիղճ ուսումնասիրության արդյունքները, սակայն վորը մինչև այժմ, ցավոք սրտի, հալտնաբերել, լիրեան հանել չհաջողվեց:

Վորպեսզի վերջացրած լինեմ իմ հողվածի այս մասը, պետք ե ասեմ, վոր նրա աշխարհայցքի մեջ գտնված աթեհիզմի այս տարրը նրա կյանքում շատ ճակատագրական դեր և խաղացել: Նրա անկրօնությունը, —վորը գեղեցիկ կերպով զուգորդվում է նրա աննման և իր՝ գրականության մեջ անգերազանց մերկացնող, ձեռքն ընկած ամեն մի նկութի վողբերգա-իերգիծաբանական ձեռվ դարգացնող լեզվի հետ, վորին ամենալավ որինակ և ծառալում նրա այս «Խարված աստղեր» պատճվածքը, —ահա այդ անկրօնությունը քիչ թշնամիներ չվաստակեց նրա համար. նա հայտնի լիր ինչպես «Քափըրը»<sup>1</sup>, անսատված և իր ամբողջ կյանքը նա անցկացրեց ճնշված իր մեկուսացմամբ Թիֆլիսի մահմետական աղքաբանակությունից, ի թիվս վորոց և իր ամենամոտ մարդկանցից: Յեվլ լերը 1878 թվի մայիսի 28-ին մեռավ Ախունդ-զազեն, ապա, վորպիսեաւ վոչվոք չհամաձայնեց մասնակցել նրա հուգարկավորությանը, նա առանց պատանվելու, առանց լիցումների, չորս համբալի ուսերի վրա արհամարհանքով և միանգամանի անթագուցիչ անհոգությամբ տարվեց գերեզմանատուն: Այս փաստի բարոյական ճնշումը, սրանից ավելի քան հիսուն տարի առաջ լեզած պայմանների շրջապատում, բացարությունների կարիք չի զգում:

<sup>1</sup> Քափըրը:

Վորպես Միրզա-Ֆեթ-Ալրու անվան հետ կապված կուլտուրական հարցերից մեկը, մատնացուցյա կանենք հետևյալը. ըստ էրեւութիւն Ըսթերցողներն արդեն գիտեն, վոր Աղբբեջանում հինգ արաբական զպրության տեղը բռնել և ներկայումս թյուքքական (լատինական) նոր շրիփտը, և վոր սա Աղբբեջանի խորհրդադին իշխանության ամենանշանակալից նվաճումներից մեկն ե, վորը այս չերկի կուլտուրական առաջադիմությունը արագացնում է առնվազն հարցուր տարրով: Յեվ ահա ալբրենական շարժման նախահայրը Արլբբեջանում համարվում է մեր Ախունդ-զպեկն, վորը առջին անգամ 1857 թ. պարսկերեն լիզով մի գիրք գրեց շրիփտի թերությունների մասին, իսկ 1863 թ. անձամբ գնաց Տաճկաստան այդ վերանորոգության իր ծրագրով, վորտեղ նա արդեն սկսեց խոսել նաև լատինական շրիփտի մասին և այդ ժամանակից ի վեր մինչև իր կյանքի վերջը չգաղարեց այդ խնդրի վրա աշխատելուց:

Սատեղ մենք չենք կարող ճրաժարվել այն բանից, զորպառ  
զի մեջ ցերենք մի բնորոշ փաստ այն մասին, թե ինչպես Ախունդ-  
զագեն հասալ այն մարին, վոր պետք է ճրաժարվել հին արա-  
բական շրիփտը կատարելագործելու հետագա աշխատանքներից և  
բաժինական շրիփտին անցնել: Այս մասին Ախունդ-զագեն իր  
ինքնակենսագրության մեջ, վոր նա գրել է 1857 թվին, հետևյա-  
լըն և ասում. — «... Թեև իմ առաջարկները ենական ձանաչվեցին,  
բայց նրանց իրազործման հարցը չըրվեց, վորովհետեւ իմ առաջար-  
կած ծրագրի մեջ, ինչպես նրանք նկատեցին, տառերը հնի նման  
միանում ելին իրար հետ, և բառերը կարգալու ժամանակ նկատվում  
ելին նույն գժվարությունները: Այս գեղքում անճրաժեշտ է մի-  
անգամայն դեռ գցել մահմեղական ալբուրենը և ընդունել յեւրո-  
պական զիրը. այն ե՛ գրել և կարդալ ձախից աշ, բոլորովին զուրս  
գցել կետերն ու տառերը և ընտրել լատինական շրիփտը...»:

իր անձնական կանքում Ախունդ-զագես վերին աստրամաբ-  
փափկասիրտ և զգացուն ձարգ եր. Նրանից մասցած իրերը վկա-  
յում են այն մասին, վոր թեև նա հայտնի է մեզ, զիմափորա-  
պես, վորպես գրամատուրդ, բայց նա վատ չեր գրում նաև բա-  
նաստեղծությաններ, սակայն, առավելապես իրենկան և ան-  
ձնական մոտիվներով:

Միրզա-Ֆեթ-Ալու հեղինակությունները գեռևս իր կենդանության ժամանակ թարգմանված են լեզել գերմաներեն, Փրանսերեն, ուստի և մասամբ անգլիերեն լեզուներով. այս լեզուներով ամենաաշքի ընկնող արևելագետներն ունեն հեղինակի մասին վերին աստիճանի զբական քննազատական աշխատություններ, վարույթացը մարդիկին Միրզա-Ֆեթ-Ալուն գեռևս իր կենդանության ժամանակ փորձես մի ժողովրդական և նշանավոր արևելան գրող:

ԽԱԲՎԱԾ ԱՍՏԵՐ

I

Իշխանությունը Պարսկաստանում յերբ Սեֆերիզմների  
տոհմին անցավ, մայրաքաղաքը Դագվիլն էր: Այ և այլ ան-  
ցուդարձերից հետո Մեծեղշահ Սեփերիզը թագավորու-  
թյունը հանձնեց իր վորդուն—շահ Աբբաս Լին: Վեց տարի  
թագավորեց շահ Աբբասը, և նրա կառավարության յոթե-  
րորդ տարին եր սկսվում արդեն, յերբ պատահեց այն, ինչ  
նկարագրված է այստեղ:

Գարնան սկիզբն եր: Նոր-տարուց յերեք որ եր անցել: Յերեկվա ժամը յերեքին շահ Արքան իր գեղեցկունի Սելմա-խաթունի հետ պալատում նստած՝ զվարճանում եր զրուցով, յերբ սենյակը մտավ ներքինապես խոջա Մուբարեքը և վողջունից հետո զեկուցեց, թե ավագ աստղագուշակ միրզա Սագր-եղ-դինը ինդրում է աշխարհի ապատան-շահից՝ շատ կարևոր գործով բնդունել իրեն: Շահը նշան արակ Սելմա-խաթունին, զոր հարեմ գնա; իսկ ներքինուն հրաձայեց.

— Կանչիր միրզա Սաղբեղ-պինին:

Ավագ աստղագուշակը ներս մտավ, վողջունեց շահին  
և ձեռները կրծքին խաչած կանգնելով նրա առաջ աղոթք-  
ներ ու սրբնանրներ արտասամնեց։ Շահը հարցրեց.

— Ի՞նչ է պատահել, միրզա:

Ավագ աստղագուշակը զեկուզեզ:

— Աշխարհի ապատան-շահն ապրած կենա: Աստղերի  
շարժումից լեսնկատեցի, վորնոր-տարուց տամնհինգ որ անց՝

Հրատ և կարիճ աստղերը մոտենալու յեն իրար: Իսկ այդ անբախտ աստղերի գործողության պատճառով բոլոր թագավորների զլիխն արևելյան յերկրներում, մասնավորապես Պարսկաստանում, մեծ փորձանք պիտի զա: Այդ իսկ պատճառով յես, վորպես ձեր բարձրագույն տան հավատարիմ ու անձնվեր ծառա, պարտք համարեցի որ առաջ այդ մասին զեկուցել աշխարհի ապաստան-շահին:

Շահն այդ ժամանակ շատ շահել եր. նրա կյանքի քսանեցերկրորդ տարին նոր եր լրացել: Հայտնի բան ե, թե այդ հասակում վորքան թանգ ու դուրեկան ե կյանքը, մասնավանդ յերբ մարդ բարձր տիտղոս ունի կամ թե չե դահ ե նստած: Այդ պատճառով ել ավագ աստղագուշակի խոսքերը յերիտասարդ շահին սաստիկ ախրեցրին: Նա զունատվեց և քիչ եր մնում, վոր շնչառապ լինի: Մի բողե անց՝ նա զլուխը բարձրացրեց և ասաց միրզա Սալբ-եղ-դինին:

— Լավ, կարող ես գնալ:

Ավագ աստղագուշակը զլուխ տվեց ու դուրս յեկավ: Շահը մենակ մնալով մոտ կես ժամ դառն մտքերի անձնատուր յեղավ, ապա բարձրածահն կանչեց խոշա Մուբարեքին: Յերբ խոջան ներս մտավ, հրամայեց.

— Իսկուն ևեթ ուղարկիր ֆերրաշին<sup>1</sup>, թող ինձ մոտ կանչի վեզիր միրզա Մուխսինին, զլխավոր հրամանատար Զաման-խանին, ֆինանսների նախարար միրզա Յախյունին և ավագ մոլլա Ախունդ-Սամադին:

Խոջան դուրս յեկավ, և մի առժամանակից հետո կոչված մարդիկ ներկայացան շահին. ըստ հարկի նրան մեծարելուց հետո՝ հրամանի սպասեցին:

Շահն ասաց.

— Մի հարցի համար յես ձեզ խորհրդակցության եմ կանչել. անհրաժեշտ ե, վոր գուք հատուկ ուշադրություն դարձնեք նրա վրա: Մենք արտակարգ նիստ պիտի ունենք, և ձեզ թույլ եմ տալիս նստել:

<sup>1</sup> Սուրհանգակ:

Նրանք հնազանդեցին: Շահը հաղորդեց այն, ինչ վոր ասել եր ավագ աստղագուշակը, և հարցրեց.

— Հը, ձեր կարծիքով՝ իս ինչպես կարող եմ այդ դժբախտության առաջն առնել:

Ներկա յեղողները չգիտելին, թե ինչ ասեն: Բոպելական լուռթյունից հետո վեզիր միրզա Մուխսինը խոսել սկսեց.

— Ձեր խոնարհ ծառայի անձնվիրությունն այս բարձր պիտության շահերին պարզ ու ակներեւ ե: Աշխարհի առաստան-շահն, ինարկե, հիշում ե, վոր իր մեծ հոր թագավորության որով պետական գանձարանը, շնորհիվ այն հանգամանքի, վոր վեզիրական պաշտոնը խելամիտ մարդկանց չեր արվում, կանխիկ փող համարյա թե չուներ: Յերբ նա այդ աստիճան դատարկվեց, յես զործի ձեռնամուխ չեղա և վորոշեցի. — Եթե պալատականներից վորեւ մեկը գավառում վորեւ հանձնարարություն կամ պաշտոն ստանա, հանգամանքներին նայած՝ պարտավոր ե գանձարանին վորեւ գումար նվիրեւ: Յեկո առավել յես կարգադրեցի, վոր յեթե աշխարհի ապաստան-շահն իր ացով վորեւ իշխանի տունը բախտավորեցնի, տանաերը պարտավոր ե նրան թանգագին գործվածքներ և վորեւ գումար պարզեցիւ: Յեկ ահա այդպիսի ձեռք առած միջոցների շնորհիվ ալժմ, ձերդ գահ բարձրանալու լոթերորդ տարում, պետական գանձարանը, փառք ալլահին, փողով լեփ-լեցուն ե: Իսկ մինչ այդ՝ վեզիրական հիմնարկության մեջ գործերն այն աստիճան մնամիտ կերպով ելին վարգում, վոր ձեր խոնարհ ծառան պատճել իսկ չի կարող: Սակայն աստղերի դեմ, ալլահն ե վկա, յես անզոր եմ վորեւ միջոց առարկելու:

Ապա զլխավոր հրամանատար Զաման-խանը խոսել սկսեց.

— Բարձր կառավարության մատուցած իմ հավատարիմ ու անձնվեր ծառայության մեջ միրուքս ձերմակեց:

Ահավասիկ, որինակ, տասը տարի սրանից առաջ Ոսմանան կառավարության մեջ, իբր աճնաեղ զինվորական նախարարն եր Դեմիրջի-ողի Բեքիր-փաշան, վորոշեցին լոթանառն հազար զորքով հարձակվել Պարսկաստանի վրա: Աշխարհի ապաստան, ձեր մեծ հայրը պարսկական զորքերի հրամանատարությունն ինձ հանձնեց: Մեր զորքը քանակով չեր զիջում ուսմանսն գնդերին, սական յես վախենում ելի են անաստված հորդաների դեմ մղվելիք պարքարում նեղություն տալ մեր աստվածապաշտանակին, ինչու և հրամայեցի ուսմանսն սահմանից սկսած մինչև Ազրբեջանի ծայրագույն սահմանները բոլոր գյուղերի ցանքսերը վոչնչացնել, ամբողջ նախիրը դուրս քշել, կամուրջներն ավերել և ճանապահները փչացնել: Յերբ Բեքիր-փաշան մեր սահմանները մուտք գործեց, մեր բանակից նա վոչ մի մարդու չափանից. ճանապարհներն աճնպես ելին փչացված, փոր նա բոլորովին չկարողացավ թնդանոթաձիկ զորքն իր հետ առաջ տանել, միայն հեծելազորքի ու հետևակի հետ մեծ գժվարությամբ թափրիզ հասավ: Նա ամեն կողմ զորանակեր ուղարկեց պարենի համար, բայց նրա ձեռքը վոչ մի հատիկ, վոչ մի յեզ, վոչ մի փոչխար չընկավ, ու յերեք որ անց՝ հիասթափված ու տիսուր, սոված ու ճնշված, թմբուկի զարկերով թափրիզից ականա յետ փախավ: Այդպիսի միջոցներով Պարսկաստանն ազատվեց թշնամու արշավանքից: Ճամպաների փչացումն ու կամուրջների ավերումն այն ասաիճան ոգտակար թվացին, փոր Բեքիր-փաշայի փախուստից հետո փորոշվեց նույն դրության մեջ թողնել: Եենդամիտ թշնամու հետ ճակատամարտելուց խուսափելով մենք—բարձր կառավարության ալլահի փողորմությամբ փրկված—ամբողջ զորքը հարեան թշնամու բոնի ուժից զերծ պահնեցինք, վոչ մի զինվորի քիթն անգամ չարնոտեց: Այդպիսի գործերում ձեր բարձրագույն տան ինն շունը զեռես կարսող և համապատասխան կարգագրություններ անել, բայց աստղերի դեմ փորեն ննար գտնել՝ չեմ կարող:

Շահի վախն աճում եր: Ֆինանսների նախարար միքազաւուն խոսել սկսեց:

— Ձեր խոնարհ ծառան վեզիրի ազգականն ու սրբակալից բարեկամն և և նրա ոգնությամբ իր տիտղոսին արժանացավ: Այդ իսկ պատճառով ել իմ անկեղծ ու անծնվեր ծառայության ընթացքում ամեն բանում յես հետեւ վում եմ նրա խելամիտ մտադրություններին ու կանոններին: Ձեր հրամանի, աշխարհի ապաստան, և իմ կարգադրության համաձայն՝ պատվիրված եր զորքին և պաշտոնեցությանը ոռոճիկ տալ գավառների յեկամուաններից, վորովինեակ պետական գանձարանում փող չկար, ինչպես այդ մասին վեզիրն արդեն ասաց: Յես վշտանում ելի ու մորմոքիում: Թեև ստորագրությամբս վավերացրի ձեր հրամաններն ու գավառներն ուղարկեցի, փոր ոռճիկ չապաւ պատճառով ժողովրդի դեպի կառավարությունն ունեցած հավատարմությունը չթուլանա, այնուամենայնիվ յես բոլոր նահանգապետներին վաղորոք գաղանի հրանագներ են ուղարկել, փորպես նրանք հրամանի ճշգրիտ իմաստի համաձայն ոռճիկ տալուց զգուշանան: Այդպիսի ձեռք առած միջոցների շնորհիվ արքունի գանձարանի յեկամուանները շատ ու շատ ավելացան, թեև զինվորներն ու պաշտոնյանները ոռճիկ չելին ստանում: Բայց փորովինեակ գախաղաղության և հանդարատության շրջան եր, և Պարսկաստանում եժանություն եր տիրում, այդ իսկ պատճառով ել նրանք կարիք չելին զգում: Այդ տեսակ գործերի համար իմ միաքը ճարպիկ ե, սական աստղերի ազգեցության դեմ, ալլահն ե վկա, նա վոչ մի հնար չի կարող դանել:

Ավագ մոլայի խոսելու հերթը հասավ.

— Թող ամենակարող արարիչ ալլահը մեծ ու անարարաց սրբերի ազոթքով աշխարհի ապաստանի թանգագի առողջությունը յերկնային ու յերկրագին բոլոր փորձանքներից աղաւա պահի: Զի կարելի նկարագրել այն հավա-

տարմությունն ու անձնվիրությունը, վոր Սեֆերիների փառավոր տունը ցուց է տվել ինձ—ուխտավորիս, վորը միշտ աղոթում է ձեր ամենակարող պետության պահպանության ու յերկարակեցության համար։ Ձեր մեծ հոր թագավորության որով, յերբ յես ավագ մոլլայի ասախմանին արժանացա, Պարսկաստանի կեսը, անդամ մայրաքաղաքի բնակիչների կեսը, աղանդավոր սուննիներ ելին։ Պերճախոս քարոզների ու զանազան վախ ներշնչող միջոցների շնորհիվ յես բոլոր հերետիկոս-սուննիներին շիտակ համպու վրա դրի՝ տասներկու սուրբ իմամներին յերկրպագերու համար։ Այժմ, ալլահի շնորհիվ, ամբողջ Պարսկաստանում հիսուսիւց սուննի չի կարելի դանել։ Այդ տեսակետից յես շատ գոհ են պարսիկ ժողովրդից այն բանի համար, վոր նա իմ հրավերով յերես դարձրեց հայրերից ու պապերից ժառանգած հին հավատից և շատապեց ուղիղ ճամպի վրա կանգնել։ Յես ուզում եմ փորձել հրեաներին ու հայերին ել մեր շիա հավատին դարձնելու, բայց միքանի խելամիս մարդիկ խորհուրդ չովին՝ կարևոր չհամարեցին. պատճառը, վոր իբր թե ամեն մի յերկրում միքանի հայ ու հրեա կա, պետք է վոր մեր յերկրում ել նրանցից միքիչ լինի. Յեվ հետո, սուրբ իմամների որբազան ավանդությամբ մահմեդական պետություններում դահ նստած թագավորները որբազան անձինք չեն համարվում, վորոնց ամեն պարագային անհրաժեշտ լինի հնագանդվել։ Այդ ասված է միայն սուրբ իմամների ու նրանց փոխանորդ մուշտեխների մասին։ Յեվ ահա յես հրամայեցի բոլոր քարոզիչներին ամբիոնից ներշնչել ժողովրդին, վոր այդ բոլոր ավանդությունները Սեֆերիների տանը չեն վերաբերում, քանի վոր Սեֆերիները ծագում են մարգարելի ցեղից և խմամի ընտանիքից, իսկ հայտնի բան է, վոր սուրբ իմամները որենքներ են հաստատել վոչ թե իրենց ընտանիքի, այլ ուրիշների համար։ Այժմ, յերբ աշխարհի ապաստանի կանքը աստղերի շարժման

շնորհիվ վտանգի մեջ ե, սիրաս, վորպես մի ձուկ, թփը՝ տում, վշտից ասպակվում ե։ Իմ ես վորքիկ խելքիս թվում ե, թե անիծված աստղագուշակը մեղնից ավելի լավ գիտե եղ բանը։ Պատմել աստղերի շարժման մասին և վոչինչ չհաղորդել նրանց դեմ՝ այդ ուղղակի դավաճանություն ե շահնիւց յեղանց գույք ամառապատճեն անկարելի շահնիւն։ Իմ հեզ, խոնարհ հասկացողությամբ անկարելի բան և թունը ցուց տալ և հակաթունի վրա մատնացուց բանել։ Ե՞ն, ասենք, մեծ մարդարեն շնորհ արագ ասելու վոր իբր թե բոլոր աստղագուշակները խաբեաներ են։ Այս խոսքերը յես ուղղում եմ նրանց դեմ և վոչ թե նրանց դիտության դեմ, քանի վոր նրանց նախագուշակությունները, մեծ մասամբ, իրականանում են։ Բայց նրանք ստանիս ու անպիտան են։ Թող աշխարհի ապահովություն առաջն առնելու համար միջոցների մասին հարցուփորձ անի։ Յեթե նա խուսափել սկսի, հրամայիր գլուխը կտրել։

Ավագ մոլլան հին թշնամություն ուներ ավագ աստղագուշակի դեմ և այս գեպքը հարմար դատեց՝ նրան ու նկատու աստղագուշակներին մի։ Լավ կոթելու համար։ Ի՞նչ կարիք կար շահնի այդպիսի անդուրեկան նորություն հակարիք կար շահնի աշխարհի անդուրեկան նորությունների առիթ տալ ու ինքն իրեն վտանգի յենթարկել։ Յերբ հետագայում այդ ճառերն ավագ աստղագուշակին հայտնեցին, նա պատասխանեց.

— Յես վախենում ելի, վոր յեթե որ առաջ դրա մասին շահնի չհաղորդեմ, կհաղորդեն մյուս աստղագուշակները, և յես շահնի աշքում վոչինչ չհասկացող մի եղ կթվամ ու պաշտոնից կարձակվեմ։

Այսպես թե այնպես, շահն այդ անդուրեկան նորության պատճառով, վոր լսել եր աստղագուշակից, իրեն վատ եր զգում, Նա առանց ավագ մոլլայի զրապարտության ել բարկանում եր սրա վրա։ Նա բարձրածախն իր մոտ կանչեց խոշա Մուբարեքին. յերբ խոշան հայտնվեց, հրամայեց.

— Իսկույն և թ ֆերլաշին ուղարկիր, թող ինձ մոտ  
բերի ավագ աստղագուշակին:

Խոջան դուրս գնաց, և մի ժամ անց՝ ավագ աստղա-  
գուշակը շահի մոտն եր:

Շահը, վորպես մի կատաղի առյուծ, տեղից բարձրա-  
ցավ ու սկսեց հանդիմանել.

— Այ անիծված: Դու ինձ վախեցրիր այն դժբախ-  
տութիւնը, վոր աստղերն են դուշակում, իսկ դժբախտու-  
թիւնը հակադրելի միջոցները թազցրիր: Շնուա դահճին այս-  
տեղ կանչել:

Իսկույն և թ սարսափելի դահճը թուրը գոտիին  
խրած ու թուկը ձեռին՝ ներս մտավ: Ավագ աստղագուշա-  
կը, վորպես տերե, գողաց: Իսկ շահը հրամայեց.

Ես րոպելին եղ շան գլուխը կարիր:

Գլխավոր հրամանատար Զաման-խանը թեև զինվորա-  
կան, բայց կակասիրա մարդ եր: Նա խղճաց ավագ աստ-  
դագուշակին, վեր կացավ ու գեկուցեց շահին.

Մատաղ լինեմ ձեր փոխարեն: Յերբ ես շան գլու-  
խը կտրեն, են ժամանակ՝ դժբախտութիւն առաջն առնե-  
լու համար՝ ել ումնից միջոցների մասին հարցնենք: Յես  
խոնարհարար խնդրում եմ, իմ ես միրուքիս սպիտակ մա-  
ղերի սիրուն, մահապատիժը հետաձգել: Հարցրեք նրան՝  
թող ասի, թե ինչ միջոցներ պիտի զործադրել այն ան-  
բախտութիւն առաջն առնելու համար, վոր աստղերն են  
դուշակում: Յեթե նա իսկական պատասխան չտա, են ժա-  
մանակ մենք մահվան պատժի կդատապարտենք:

Շահը հրամայեց դահճին՝ ազատ թողնել աստղագու-  
շակին ու դուրս գնալ: Հետո զիմելով վերջինիս՝ ասաց.

— Դեռ անիծված, ես րոպելին ասա, վորձանքի դեմ  
ինչ միջոցներ պիտի ձեռք առնել:

Խեղճ աստղագուշակը նեղ դրութիւն մեջ եր, նա չգի-  
տեր, թե ինչ միջոց առաջարկեր: Վախից նա վորեե համա-  
պատասխան բան չկարողացավ մտածել. վերջապես ասաց.

Մատաղ լինեմ ձեր փոխարեն: Դժբախտութիւն  
առաջը կարելի յե առնել: Մի ժամ միայն ինձ ժամանակ  
տվեք, յես կերթամ և Ուլուղ-բեկի կազմած աստղագիտա-  
կան աղյուսակը կնայեմ, ապա կվերագունամ ու կասեմ:

Ուլուղ-բեկի աստղագիտական աղյուսակներում դրժ-  
բախտութիւն առաջն առնելու միջոցների մասին վոչինչ  
շեր զրված. ավագ աստղագուշակն ուզում եր պատրվակից  
ողավել, վարպետզի մելլանա Զելալ-եղ-զինի հետ խորհր-  
դակցի, վորին նա աստղագիտութիւն մեջ իրենից ավելի  
փորձված եր համարում: Շահը նրան արձակեց. բայց ավագ  
աստղագուշակը գեռ գուրս շեր յեկել, յերբ խոջա Մուլքարե-  
քը ներս մտավ ու զեկուցեց, վոր մելլանա Զելալ-եղ-զի-  
նը շահին խնդրում ե ընդունել իրեն: Շահը պատվիրեց.  
նրան ներս կանչել, իսկ ավագ աստղագուշակին հրամայեց.

— Միքիչ սպասիր:

Մելլանան ներս մտավ, շահին հարկ յեղած հարգան-  
քը տվեց ու նրա թուլպակութիւնը նստեց: Հետո նա ասաց.

— Աշխարհի ապաստանն ապրած կենա: Զեր խոնարին  
ծառան իր ծերութիւն պատճառով հեռացավ պալատից և  
մի անկյունում իր համար նստելատեղ ընտրեց: Բայց նկա-  
տի առնելով այն հանգանանքը, վոր նորատարվա տամնը-  
հինգերորդ որը կարիճ և Հրատ աստղերը մեկզմեկու մո-  
տենալու պատճառով աշխարհի ապաստան-շահի սրբազնն  
անձնավորութիւն հետ կարող է մեծ դժբախտութիւնն պա-  
տահական պարունակութիւն ինձ, նախորոք համարեցի շահին աված  
թիամբ բախտավորեցնել ինձ, նախորոք հարոնել նրան  
աստղերի մասին և վտանգի նկատմանը միքանի միջոցներ  
առաջարկել: Գուցե, տերը մի արասցե, ջահել աստղագու-  
շակներին այդ միջոցներն անհայտ լինեն:

Շահը շատ ուրախացավ.

— Մելլանա, մենք հենց արդ մասին ելինք խորհր-  
դակցում: Աստղերի մասին հայտնի յե ամեն ինչ, գու-  
միայն ասա, թե ինչ միջոցներ են հարկավոր:

Մելանան ասաց.

— Թող աշխարհի ապաստան-շահն այդ գժբախտ որերին, յերբ գեռ նոր-տարուց տասնընինդ որ չի անցել, հրաժարվի իշխանությունից և իր գահն ու թագը հանձնի վորեւ այնպիսի հանցագործի, վոր մահվան պատժի յէ արժանի, իսկ ինքը ժողովրդի աչքից թագնվի։ Ազգիսով աստղերի առաջ ըերած չարիքը հանցագործին կվիճակվի, քանի վոր այդ ժամանակ նա Պարսկաստանի թագավոր կինի։ Յերբ գժբախտությունը պատահի, և այն հանցագործ, վորին գահն ու թագը պիտի պատկանեն, կիսորտակվի, այն ժամանակ աշխարհի ապաստան-շահը իր թագստի կացարանից դուրս կտա, թագն ու գահին տեր կդառնա և փող ու առողջ ու յերջանիկ՝ կթագավորի։ Բայց ժողովրդից վոչվոք թող չիմանա այդ միջոցների մասն և չկարծի, թե աշխարհի ապաստան-շահը ժամանակավորես հրաժարվել ե թագն ու գահից և հանցագործին գահ նստեցրել։ Թող նրան իսկական թագավորի տեղ ընդունեն։ Անհրաժեշտ և նաև հարեմի կանանց ապահարգան տալ և ամուսնության վերաբերող արձանագրությունները պատառուել։ Ապա առաջարկել կանանց, արդյոք նրանք նորից չեն ամուսնանալ Մեմեդի վորդի Արբասի հետ, վոչ թե շահի, այլ ժողովրդի միջից դուրս յեկած մի հստարակ մարդու հետ, վորպեսզի նրա հետ կարիքն ու աղքատությունը կիսեն։ Նրանց, վորոնք համաձայնություն կտան, նշանագրել Մեմեդի վորդի Արբասի հետ և ամուսնությունը նորից արձանագրել, իսկ նրանց, վորոնք չեն համաձայնիլ, ազատ թողնել։

Գլխավոր աստղագուշակը փրկված եր կորստից։

Շահի դեմքից վախի բոլոր նշանները չքացան։ Գունատությունը կարմրության փոխվեց։ Բոլոր ներկա յեղողները բարձրաձայն մելքանալի խելքին ու ընդունակություններին հավանություն տվին։ Շահն ուրախ ավագ մոլլալին դիմեց ու հարցրեց։

— Արդյոք նկատի ունեք դուք որենքին դեմ գնացող այլպիսի մի մեծ հանցագործի, վորը մահվան պատժի արժանի լինի, վորպեսզի թագավորությունը, գահն ու թագը նրան հանձնվի։

Ավագ մոլլան պատասխանեց.

— Թող արարիշ-ալլահը բախտավոր կյանք տա աշխարհի ապաստան-շահին։ Ղաղվինում այնպիսի մի անզգամ և հայտնվել, վորպիսին ամբողջ աշխարհում հազիվ թե ձարվի, վոր ավելի հանցավոր լինի և ավելի արժանի մահվան պատժի։ Նրան թամբադործ Յուսուֆ են կոչում։ Հայտնի չե, թե վարտեղ ե նա գաստիարակություն ստացել, բայց այժմ, յերբ բնակություն և հաստատել Ղաղվինում, նրա մոս աշակերտելու յէ գալիս ամբոխը։ նա սկսել է հազար ու մի սուտ փշել, ազնվագույն գիտնականներին ու պարծառ որենքի սպասավորներին պախարակել։ Եդ անիծվածը բացարձակորեն սովորեցնում ե իր աշակերտներին, վոր իբր թե որենքի բարեպաշտ գիտունները խաբում են ժողովրդին։ Նրա կարծիքով, որինակ, մուշտեկոնները ըսկի յել պետք չեն։ արդյունքի կամ հասուլիթի հինգերորդ մասը իմամին տալը որենքին հակառակ բան ե։ իբր թե որենսգետները հասարակ ժողովրդի նկատմամբ հնարավոր չեն համարում հանգուցյալ որենսգետ-մուշտեկոնների կարծիքներին կողմնակից հանդիսանալ միմիայն այն պատճառով, վոր են ժամանակ որենքները բացատրելու կարիք չի լինի, հետեաբար և վոչ մի տեղից արդյունք չի ստացվի։ Հայ, բացի այդ, խոսում ե նաև մեր բարձր կառավարության մասին։ ասում ե, վոր ամբողջ իշխանությունը գլուղի տանուտերից ոկսած մինչև շահը—ճնշողներ ու ավագակներ են, վոր պետական ու ժողովուրդը նրանցից յերբեք ոգուտ չեն ստացել, վոր նրանք գերի լինելով իրենց կըքերին ու ցանկություններին՝ ժողովրդին միայն չարչարել ու ճնշել են։ Նրանք իրենց վարժունքով վոչ մի որենքի ու կանոնի չեն հսազանդվում, վոր իբր թե արդորինակ

վարքը միմիայն բոնականերին և ավագակներին և վայել։ Ասում են, վոր նա հոգիների տեղափոխության մասին և քարոզում։ Զեր հզոր կառավարության յերկարակեցության նվիրված խոնարհ աղոթարարիս կարծիքով աշխարհի ապաստան-շահն իր գահն ու թագը պիտի հանձնի եղ սրիկացին, վորպեսզի նա ասաղերի կործանարար գործողության շնորհիվ իր արժանի պատիժն ստանա և են աշխարհը դնա։

Ժողովին բոլոր ներկա յեղողները համաձայնեցին այդ կարծիքին և բարձրածայն պնդեցին։

— Հա, եղ անիծված թամբագործ Յուսուֆը միանգամայն արժանի յէ մահվան պատժի ու յերկնալին պատուհանների։

Շահն ուրախայավ ու ասաց.

— Յես նրա մահվան համաձայնություն են տալիս Եղուց առավոտյան այդ բոլորը կկատարվի։

Ժողովին ներկա յեղողները գնալու թուլավություն ստացան ու ցըվեցին։

Գուցե ընթերցողները կասկածեն պատմվող գեպքերի ճշտության նկատմամբ և այս ամենը հնարովի, սարքած բան համարեն։ Այդ գեպքում կիմնդրելի «Աշխարհը զարդարող պատմություն» վերնագիրը կրող զրքեց միքիշ կարդալ այն դեպքերի մասին, վոր տեղի յէն ունեցել շահ Աբբասի գահ բարձրանալու յոթերորդ տարում։

Հետեւալ որը վերևում նկարագրված ժողովից հետո՝ շահի հրամանով բոլոր իշխանները, ազնվականները, թագավորության բարձրաստիճան պաշտոնյանները, զիտնական որենսգետները, հոգևորականությունը և առհասարակ ամբողջ պաշտոնեյությունը՝ զյուղական տանուտերից սկսած մինչև վեղիբը՝ շահի պալատն յեկան։

Յուրաքանչյուրը կատարալապես լուս ու անշարժ կանգնել իր տեղում՝ սպասելով շահի գուրս գալուն։ Յեվ ահա շահը թագը դիմին ու աղամանդներով զարդարած գալիսոնը

ձեռքին՝ հանողես յեկավ։ Նա թևերին թանգաղին քարերով նախած բազալտներ եր կրում, իրանին՝ թուր ու գոտի։ Շահը բարձրացավ և բազմեց գահին, վոր գտնվում եր հատակից մի արշին բարձր բաց վարագույրներ ունեցող ամպհովանու տակ։ Նա ժողովրդին ամեն կողմից տեսանելի յեր։ Դիմելով ընդունելության դահլիճում ներկա յեղողներին՝ ասաց.

— Պարոններ, այժմ արդեն յերրորդ տարին ե, վոր ամենաբարձրալ տեր աստուծո բարեհաճությամբ թագավորում եմ ձեզ վրա։ Ուժերս ներածին չափ՝ ձեզանից յուրաքանչյուրին յես վողորմություն ու փայփայանք եմ ցուց տվել։ Շատ ու շատ գոհ եմ, քանի վոր գուք ամենքրդ գեպի Սեֆևիդների տան տածած սիրո շնորհիվ ինձ անձնվիրություն ու հավատարմություն ելիք ցուց տավիս։ Այժմ, միքանի դժվարությունների պատճառով, վորոնց մասին անհրաժեշտ չեմ համարում ձեզ հայտնել, յես ստիպված եմ թագավորությունից հրաժարվել և գահն ու թագը հանձնել վորեւ այնպիսի մարդու, վորն ինձնից ավելի արժանի կիմի այդ բարձր աստիճանին։ Այդպիսին ձեզ մատնացուց կանեն ավագ մոլլան, զիլավոր հրամանատար Զաման-խանը, վեզիրը, Փինանսների մինիստրը, մելլանա Զելալ-եղ-դիմիր և ավագ աստղագուշակը։ Մնհրաժեշտ ե, վոր գուք հանդիսավոր կերպով ու շքով նրա մոտ գնաք, այստեղ բերեք և գահ բարձրացնելով՝ ձեր ինքնակալ թագավորի տեղ ընդունեք և հպատակվեք այդ մարդուն, վորն իմ հրամանով ինձ պիտի հաջորդի։

Յերբ շահն իր ճառն ավարտեց, թագը հանեց ու գահի վրա գրեց, հանեց իր բոլոր շքեղ հագուստները, թուրն ու գոտին և մարմինը ծածկեց իմ մաշված հագուստով։ Հետո մեկ անգամ ևս զիմեց ժողովրդին ու ասաց.

— Այժմ յես ժողովրդի միջից գուրս յեկած աղքատ Աբբասին եմ՝ Մեմեդի վորդին։ Ինձ մի վնասեք, միենուն ե։ Հեք գտնիլ։ Յեր ալլահ, որհնիր.՝ նա գահից ցած իջավ ու հարեմ գնաց։

Հարեմի բոլոր բնակչուհիները շահի հրամանով խորվեցին մի սենյակում՝ սպասելով նրան։ Շահը սենյակ մտավ մաշված հագուստով։ Հարեմի գեղեցկուհիները նրան այդ վիճակում տեսնելով՝ քիչ մնաց, վոր քահ-քահ ծիծաղելին։ Սակայն շահի խիստ գեմքն ու խոժոռաված հմաքերը նրանց զսպեցին։ Շահը հրաման տվեց խոջա Մուբարեքին։

— Մոլլա Ռուսուլին իր յերկու ընկերների հետ այս-  
տեղ ըեր։

Մոլլաներն արգեն վաղուց յեկել ելին ու դուան մոտ  
կանգնել։ Յերբ նրանք ներս մտան, շահը նստելու նշան  
արակ։ Ապա դիմելով հարեմուհիներին՝ ասաց։

— Իմ թանգագին ամուսիններ, ծալրահեղ ցավակցու-  
թյամբ ձեզ պիտի անգուքեկան նորություն հաղորդեմ։ Թող հայտնի լինի ձեզ, վոր յես այժմվանից այսու Պարս-  
կաստանի թագավոր չեմ։ Ձեզ պալատում պահելու, զար-  
դարանքներ ու հագուստներ տալու միջոցներ չունեմ։ Ձես  
ժողովրդի միջից դուրս յեկած մի աղքատ ու չնշին մարդ  
եմ։ Այդ պատճառով ել անհրաժեշտ է ձեզ ապահարզան  
առալ ու ազատել, վորպեսզի դուք հնարավորություն ունե-  
նաք ամուսնալ այն մարդու հետ, վորին վոր կսիրեք։

Հետո մոլլա Ռուսուլին դիմելով՝ հրամայեց։

— Բաժանիր նրանց ինձնից։

Մոլլա Ռուսուլը յերկու վկաների ներկայությամբ  
յուրաքանչյուր հարեմունու համար կարդաց ամուսնալու-  
ծության ձևակերպումը։ Հարեմի գեղեցկուհիները այդորի-  
նակ դեպքերի ականատես լինելով՝ շատ վախեցան։ Նրանք  
չփառելին թե ինչ անեն, քանի վոր յերբեք այլպիսի բան  
չի պատահել։ Ամենքին մեծ զարմանք եր տիրել։

Յերբ ամուսնալուծության ծեսը վերջացավ, խոջա  
Մուբարեքը շահի հրամանով նրանց ամուսնության ար-  
ձանագրությունները պատառուեց։ Շահը մեկ անգամ եւ  
դիմեց գեղեցկուհիներին և ասաց։

— Յեթե ձեզնից վորևե մեկը՝ թշվառությունից ու  
չքավորությունից չվախենալով՝ կկամենա ինձ—Մեմեդի

վորդի Աբբասի հետ նորեն ամուսնանալ, յես կհրամայեմ  
ամուսնության ձևակերպումը կարդար։

Բոլոր հարեմուհիները ցանկացան նորից շահի հետ  
ամուսնանալ, վորովհետեւ շահը յերիտասարդ ու գեղեցիկ-  
եր։ Բացի այդ՝ նրանք այդ ամենը հանաքի տեղ ելին ըն-  
դունում. վոչվորի մաքովն անգամ չեր անցնում, վոր շահ  
Աբբասն անսպասելիորեն Մեմեդի վորդի Աբբաս կդառնա։  
Սակայն նրանց մեջ յերկու գեղեցկուհի կար, վորոնք իրենց  
իսկ կամքի հակառակ շահի հարեմն ելին բերվել։ Նրանք  
յերկշոտ ցածր ձայնով հայտարարեցին։

— Մենք ամուսնացել ելինք թագավորի հետ և շատ  
գոհ ելինք մեր բախտով ու աստիճանով։ Իսկ այժմ, յերբ  
այդ բախտից զրկվել ենք, չենք ուզում ամուսնանալ Մե-  
մեդի վորդի Աբբասի հետ։

Իսկուն ևեթ յերկուսին ել ազատ թողին։ Մնացած  
բոլոր հարեմուհիները նորեն ամուսնացան Մեմեդի վորդի  
Աբբասի հետ։ Խոջա Մուբարեքին հրամայված եր նրանց  
բոլորին վոտով Ղազվինի վեցերորդ փողոցի սկզբում զրո-  
նըզող տունը տանել։ Ինքը—խոջա Մուբարեքը հետո պեաք  
և պալատ վերագանար ու ընդունելության դահլիճում  
լիներ։ Մեմեդի վորդի Աբբասը դուրս յեկավ հարեմից ու  
չքացավ։

Թամբագործ Յուսուֆի արհեստանոցը գտնվում եր  
շահի մզկիթին կից հրապարակի արեւելյան կողմում։ Յե-  
րեկվա ժամը յերկուսն եր։ Թամբագործ Յուսուֆն իր կես-  
որվա աղոթքն արած՝ նստել ու սանձ եր կարում. պատ-  
վեր տվողը ինզրել եր նրան հենց այդ որն իսկ պատրաս-  
տել։ Նրա հետ նստած ելին նաև նրա յերկու բարեկամ-  
ները և լսում ելին նրա զրուցները։ Թամբագործ Յուսուֆը  
գանգատվում եր թանգությունից, վորի պատճառով խեղճ  
աղքատներն այդ տարի մեծ կարիքի մեջ ելին ընկել։ Ան-

ցյալ տարվա վերջին յերաշախ ու ջրի սակալության շնորհ հիվ Ղազվինի շրջակալում յեղած ցանքսերի մեծ մասն այրվեց ու փչացավ: Թանգության պատճառն ել հենց այդ եր: Թամբաղործ Յուսուֆը դառնում եր.

Զարմանում եմ յես ես կառավարության վրա. հազար ու մի հնար կա Ղազվին ջուր բերելու համար, բայց նա այնքան անհոգ ե, վոր իսկի ուշադրություն չի դարձնում վրա վրա և չի մտածում իր հպատակների ու իր մայրաքաղաքի բարեկեցության մասին:

Այդ ժամանակ հրապարակի արևմտյան կողմում փռու ամպ բարձրացավ: Թամբաղործ Յուսուֆը ասեղը ձեռքից բաց չթողնելով՝ դրուխը բարձրացրեց և մի ամբողջ թափոր տեսավ: Սակայն նրա մաքով անգամ չեր անցնում, վոր այդ թափորը դեպ իրեն և ուղղվում: Ճիշտ դեպ իրեն ելին դալիս տասներկու սուրհանդակ ընտիր մետաքսե հազուստով ու քառանկյունի գլխարկներով. նրանց հետեւում ելին տասներկու դրոշակակալիքներ գույնը զույն դրոշակներով, վերջիններիս—ծառաների խումբը. նրանցից մեկը գլխի վրա բռնած ուներ մի մատուցարան. ծառաներին հետեւում ելին ֆերրաշները, իսկ նրանց յետեկից ավագ ախոռապանը տանում եր թուրքմենյան մի սանձած ձի, վորի թամբն ու սարքը թանգագին քարերով ելին զարդարված: Զիու սանձը վոսկեզարդ եր, ուսերին կրում եր մարդարտե կապ, պարանոցին—զմրուխտե ծոպերով թելեր: Իսկ նրանց յետեկից կատարյալ վեսությամբ ու հանգիսավորությամբ ձի նստած՝ գնում ելին գլխավոր հրամանատար Զաման-խանը, վեզիրը, Փինանսների մինիստրը, մելյանա Զելալ-եդ-դինը, ավագ տառագուշակը, հարդելի որենսգետաները, հոգեորականությունը և այլ բարձրաստիճան, անվանի անձինք: Նրանք մոտեցան թամբաղործ Յուսուֆի արհետանոցին ու կանգ առան: Ավագ մոլան ու գլխավոր հրամանատարը ասպանդակների վրա բարձրանալով՝ թամբաղործ Յուսուֆին գլուխ տվին:

Թամբաղործ Յուսուֆը ծալքահեղորեն զարմացած՝ հարգանքով վատքի կանգնեց: Այն ժամանակ ավագ մոլան խոսել սկսեց:

— Ճակատաղի կամքով, վարպետ Յուսուֆ, այսոր դու մեր թագավորն ես: Եյժմ պարսկական գաճի վրա շահ Արքան ավես գոյություն չունի: Պատիվ արա ու բախտավորեցրու մեզ, բարեհաճիր արքունի պալատը դար, վորպեսզի հանգիսավոր կերպով գահ բարձրանաս:

Թամբաղործ Յուսուֆը ծալքահեղորեն զարմացած՝ չեր կարողանում հասկանալ, թե դա ինչ է նշանակում: Նրա առաջ կանգնել ելին յերկրի բոլոր բարձրաստիճան մարդիկ: Այդպիսի ճառ եր արտասանում ավագ մոլան, վոր ամբողջ Պարսկաստանում նշանավոր մարդու համբավ ուներ, բայց այդ այն աստիճան զարմանալի յեր, վոր թամբաղործ Յուսուֆը հավատալ չեր կարողանում, թեև ամեն ինչ տեսնում եր իր սեփական աշքերով: Վերջապես նա պատասխաներու պատրաստվեց.

— Ներողություն, պարոն ավագ մոլա, ձերդ հարգարժանավորությունը յես Պարսկաստանի լուրջ մարդկանցից մեկն եմ համարել և չգիտեմ, արդյոք խելազարվել եք, թե հանաք եք անում, վոր այդպիսի ճառեր եք ասում: Յես մի հասարակ թամբաղործ եմ և վոչ մի կապ չունեմ զաճի ու թաղի հետ: Յես ու իմ ալլահը, հասկանալ չեմ կարողանում, թե ինչին պիտի վերագրել ձեր վարժունքը: Յես կատարելապես շնորհ եմ: Խոնարհաբար ինգրում եմ, ինձ հետ հանաք մի անեք:

Այն ժամանակ գլխավոր հրամանատար Զաման-խանը խոսել սկսեց:

— Վարպետ Յուսուֆ, դու այժմ աշխարհի ապաստանն ես, իսկ մենք—սարուկներդ ու շներդ—քո շենքին: Քեզ կայել չի խոնարհաբար ինցիդել, այլ պետք ե թագավորի պես հրամակել մեզ: Մենք չենք խելազարվել ու հանաք չենք անում: Ասենքս խելքով զգաստ ենք ու հիշողությամբ

ամուր: Ամենաբարձրակ տեր աստուծո հրամաններն անփոփոխ են: Այսոր ըստ իշխանությունն ընդունված է ամբողջ Պարսկաստանում: Համեցեք, ինչպես առաջարկել է ավագ մոլլան, չնորհ բեր արքունի պալատը հանդիսավոր կերպով դահ նստելու համար:

Ապա դեպի այնտեղ կանգնած ծառաները լրջիլով ասաց.

— Թագավորական հագուստները բերեք և հազցրեք աշխարհի ապաստանին:

Ծառաներն արհեստանոց մտան, ձեռքների վրա տանելով մատուցարանը, վորի վրա արքայական հագուստներն ելին գտնվում: Մատուցարանը ցած գրին և սկսեցին թամբագործ Յուսուփին մերկացնել, մաշված շորերը հանել և արքայականը հազցնել: Թամբագործ Յուսուփը չեր դիմադրում, այլ հլու-հնազանդ կանգնել եր, թուլլ տալով նրանց մենել այն ամենը, ինչ վոր ուղում ելին: Վերջապես հանգերձավորումը վերջացավ: Ավագ ախոռապանը գեղեցիկ սանձով մի ձի մոտ բերեց: Թամբագործ Յուսուփին նրա վրա նստեցրին, և թափորը նույն կարգով պալատ շարժվեց: Բոպե առ բոպե փողոցներում լսվում եր ֆերրաշների ճիշը:

— Դեն կացեք, դեն կացեք:

Հազվինի բնակիչները, աղամարդիկ ու կանայք, ծերեր ու ջահիներ, պատուհաններից դուրս ցցվեցին, կտուրները բարձրացան և նայում ելին. քանի վոր վոչվոք վոչինչ չգիտեր, ամենքն ել շատ ելին զարմացել:

Արքունի պալատի դարպանների մոտ ֆերրաշներն սպնեցին թամբագործ Յուսուփին ձիուց ցած իջնել: Ավագ մոլլան և գլխավոր հրամանատար Զաման-խանը նրան թեփանցուկ ու հարգանքով դահի դահլիճը մտցրին: Այստեղ նրան արքունի դահ նստեցրին, և պետության բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները, ուստալ իրավագետները, հոգեորականությունը, անվանիներն ու ազնվականները և

ամբողջ պաշտոնեյությունը շարքերով կանգնեցին գահի առաջ և հարգանքով ձեռքերնին խաչեցին: Ավագ մոլլան աղոթք կարդաց և արքայական թագը թամբագործ Յուսուփի գլխին դրեց, ապա նրան զարդարված զոտով զոտեց, թուլլ գոտուց կախեց, թանգագին քարերով նախշած բազանները թերեին հազցրեց ու դեղեցիկ գավազանը ձեռների մեջ դրեց: Հետո նորից աղոթք կարդաց ու ժողովականներին դիմեց.

— Վողջունեցեք թագավորին:

Ու վողջունի աղազակները արձագանգելով պալատում՝ դեպի յերկինք ուղղվեցին: Սրինգը հնչեց, ու հրթիւնները պատվելով դեպի վեր սլացան: Դա աղդանշան եր. քաղաքից դուրս գտնվող բերդում հարյուր տասը վողջունի տըաքոց լսվեց: Չսայած վոր Սաադի և Հաֆիզ նշանագոր բանաստեղծներից հետո՝ բանաստեղծությունը Պարակաստանում անկման վիճակի յեր հասել, բանաստեղծների վոտանավորները անբովանգալից և գատարկամիտ ելին, սակայն ալլահի շնորհիվ այն ժամանակ բանաստեղծական տաղանդ ունեցող միքանի մարդ գտնվեց: Նրանք անպատրաստից շահ Յուսուփի գահ բարձրանալուն փայտում ուղերձներ հորինեցին: Նրանցում նկարագրվում եր այդ հանգեսը, և ինքը Յուսուփին իր իմաստությամբ համեմատվում եր Սոգոմոնի հետ, ձեռնառատությամբ՝ Հաթեմի հետ, քաջությամբ՝ Ռուսատմի հետ և ուժով՝ ճակատագրի հետ: Հազվինի սրամիտները այդ դեպքին նվիրված ժամանակդիր-վոտանագոր հորինեցին.

Մեր Յուսուփը այն Հովսեփի չե,

վոր հնում գեղեցկուրյամբ եր փառափոր նա թագավոր չե գեղեցիկների,

սակայն նա պարսիկների յե թագավոր:

Յերբ հանգեսը վերջացավ, ավագ մոլլան հայտարարեց ժողովրդին.

— Կարող եք ցրվել:

Բոլորը պալատից դուրս յեկան։ Միայն շահ Յու-  
սուֆը մնաց զահի վրա նստած։ Նրա առաջ կանգնել  
եր ներքինի Մուբարեքը այլ ներքինիների հետ, միքանի  
ծառաներ՝ իրենց պետ Ազրմ-բեկի հետ, դրսում՝ ֆեր-  
բաշները։ Շահը խոկումների անձնատուր յեղափ։ Մի  
առժամանակ անց նա հարցրեց խոջա Մուբարեքին։

— Ո՞վքեր եք դուք։

Խոջա Մուբարեքը պատասխանեց։

— Մենք ձեր հարեմի հեղ ու հավատարիմ ներքինի-  
ներն ենք. յես—նրանց պետը, իսկ նրանք—իմ ստորա-  
դրյաները։

Շահը դարձավ գեղի ծառաները և հարցրեց.

— Իսկ գո՞ւք ովքեր եք։

Ծառաների պետ Ազրմ-բեկը պատասխանեց։

— Մենք ձեր չնշին ծառաներն ենք, ձեր սպասավոր-  
ները։ Յես նրանց պետն եմ, իսկ նրանք իմ ողնականները։

Շահ Յուսուփը հարցրեց.

— Իսկ ե՞ն ով ե, այ, վոր կանգնել և դռների յե-  
տեռում։

Ազրմ-բեկը պատասխանեց։

— Այդ ֆերբաշներն են—պատրաստ ձեղ ծառայելու։

Շահ Յուսուփը հրամայեց.

— Դուք դուրս գնացեք, քո ստորագրայաներն ել, խո-  
ջա Մուբարեք, թող դուրս գնան, իսկ ինքդ մնա:

Յեվ ահա, յերբ բոլորը դուրս յեկան, շահ Յուսուփն  
իր մոտ կանչեց խոջա Մուբարեքին և ասաց։

— Դեմքիցդ տեսնում եմ, վոր դու, պետք ե վոր,  
լավ մարդ լինես։ Ասա ինձ, ինչու այս ամենը պատահեց։  
Չե վոր դու միշտ շահ Աբբասի ննջարաններում ելիք զըտ-  
նըրում։ Անկարելի բան ե, վոր այս ամենը քեզ հայտնի  
չլինի։

Իրոք, խոջա Մուբարեքն ազնիվ ու իրավացի մարդ  
եր։ Նա մտածեց.

— Թագավորից ճշմարտությունը թագցնելը լավ բան  
չէ։

Վորովինեան նա միշտ շահ Աբբասի սենյակի դուսն  
յետեն եր գտնվում, վորպեսզի խկույն ևեթ հայտնվի, յերբ  
վորեկցե բանի համար կանչելու լինեն, այդ խկ պատճա-  
ռով ել նա գիտեր այն ամենը, ինչ վոր տեղի ունեցավ  
նախորդ որերին, ու լսել եր իշխանների մեջ տեղի ունե-  
ցած բոլոր խորհրդակցություններն ու խոսակցություն-  
ները։ Նա ամեն ինչ գիտեր և այդ մասին սկզբից մինչեւ  
վերջը պատմեց շահ Յուսուփին։

Շահ Յուսուփը հարցրեց.

— Իսկ վարտեղ ե շահ Աբբասը։

Խոջա Մուբարեքը պատասխանեց։

— Նա ազբատի շորեր հագավ ու չքացավ, և այժմ  
հայտնի չէ, թե վարտեղ ե նա։

Շահ Յուսուփը խելոք մարդ եր։ Նա սատկերից չեր  
վախենում։ Բայց այդպիսի արտասովոր բարձրացումը նրան  
վախեցնում եր։ Այնուամենախիվ նա ննարավոր չեր հա-  
մարում հրաժարվել իշխանությունից, վոր նրա շնչին եր  
փաթաթել ժողովուրդը։ Ակամավից նա կառավարության-  
գործերին ձեռնամուխ յեղափ։ Նախ և առաջ նա հրամա-  
յեց իր մոտ գալ ֆերբաշների պետ Ասադ-բեկին ու հրա-  
մայեց նրան։

— Իսկուն ևեթ հետդ տամներկու ֆերբաշ վերցրու-  
ձերբակալիր ու բեր ավագ մոլլա Ախունդ-Ամանդին,  
զլիսավոր հրամանատար Զաման-խանին, վեզիր միրզա  
Մուխսինին, Փինանսների մինիստր միրզա Յախյուլին,  
ավագ աստղագուշակ միրզա Սանդր-եղ-դինին և մելլա-  
նա Զելալ-եղ-դինին։ Ամենքին բանարկիր բերդում։ Յերբ  
հրամանս կատարես, վերադարձիր ու հաղորդիր։

Ասադ-բեկը մինչ գետին գլուխ ավեց ու հեռացավ.  
Այն ատեն շահ Յուսուփը սպասագործների պետ Ազրմ-բե-  
կին իր մոտ կանչեց ու հրամայեց.

— Կարդագրիք, վոր ինձ համար ընթրիք պատրաստեն, թե չե այսոր յես գեռ վոչինչ չեմ կերել:

Սպասավորների պետը զեկուցեց.

— Յես արդեն կարդագրեցի: Խոհարարներն ընթրիք են պատրաստում:

Շահը հրամայեց.

— Այժմ դու և խոջա Մուբարեքն այտեղ յեկեք: Մեկը մտուսի յետեից ցուց տվեք ինձ բոլոր սենյակներն ու հարեմը: Բացատրեցեք, վորտեղ և իմ ննջարանը:

Սպասավորների պետն ու խոջա Մուբարեքը նրա առաջ ընկան և սկսեցին մեկը մտուսի յետեից սենյակները ցուց տալ: Առաջին սենյակում փռված ելին բազմերանդ խալիներ, պատերն ու առաստաղը ամբողջովին նկարված հիասքանչ ծաղիկների, խոտերի ու թոշումների պատկերներով: Յերկրորդ սենյակն ել զարդարված եր խալիներով, իսկ պատերին նկարված Սեֆերիների տան պատկանող հանգուցյալ շահերի և նշանավոր արքայազների պատկերները: Յերրորդ սենյակում պատերի վրա նկարված ելին պարսկական թագավորական այ և այ տոհմերին պատկանող թագավորների պատկերները: Չորրորդ սենյակում — պարսկական հին դյուցազներ ու Մազանդարանի գեեր, վորոնց մասին պատմվում և «Շահ-նամե» պոեմում. նրանք կովում ելին իրար հետ, գեերը յեղջուրներ ու պողեր ռւնեցին: Հինգերորդ սենյակի պատերի վրա պատկերված ելին այն պատերազմները, վոր շահ իսմայիլ Սեֆերին եր վարել: Հարեմի բոլոր սենյակների պատերին նկարված ելին աղջիկներ ու յերիտասարդներ. յերիտասարդները հարգանքով ծաղկեփնջեր ելին նվիրում աղջիկներին, իսկ աղջիկները յերիտասարդներին գավաթներ մատուցում: Յուրաքանչյուր սենյակում անկողին եր պատրաստված: Շահ Յուսուֆը հարեմի սենյակներից մեկն իրեն համար ննջարան ընտրեց և խոջա Մուբարեքից հարցըրեց.

— Հարեմի վոր սենյակն ե հանգերձարանը:

Խոջա Մուբարեքը զեկուցեց.

— Ամենավերջի սենյակը: Բայց նրա դուռը փակե, և բանալիները մնդուկների պահապան Աղա-Հասանի մոտ են:

Շահի հրամանով սպասավորների պետը իսկուն և եթայնտեղ բերեց մնդուկների պահապանին: Հանդերձարանի դուռը բաց արին և շահին ցուց տվին: Այդ մի մեծ սենյակ եր: Նրանում բոլոր պատերի տակ մնդուկներն ելին տեղափորփած: Մնդուկների կափարիչները վեր բարձրացրին և շահին հազվագյուտ ու զարմանալի հանդերձներ ու զարդարանքներ ցուց տվին: Այստեղ կային թանգարին բրդե շալեր, կանացի նուրբ հագուստներ, իսկական մետաքսե գործվածքներ, վարդեր, ականջի ողեր, թանգարին քարերից պատրաստված մասանիներ, ընտիր մարջանից հյուսված մանյակներ: Շահ Յուսուֆը յերեք աղջիկ ուներ. մեծական մատանի ու մանյակ, մեկական լրիվ հագուստ ու շալ: Կնոջ համար ևս հագուստ և մի շալ ընտրեց և այդ ամենը խոջա Մուբարեքին հանձնելով հրամայեց.

— Տար այս իմ կնոջը տուր, վոր ապրում ե Ղազվինյան յերկրորդ փողոցում, իմ հին տանը: Ասա նրան, թող իմ մասին անհանգիստ չլինի և տղաներիս վազն ինձ մոտ ուղարկի:

Խոջա Մուբարեքն իր հետ յերկու ֆերրաշ վերցրեց ու մեկնեց: Այդ ժամանակ արկը մայր մտավ: Սպասավորների պետն առաջարկեց շահին առաջին սենյակը վերագանալ: Կարմիր մոմերը վառեցին: Սեղանը բաց արին: Շահը լվացում կատարեց, ճաշից ու քնելուց առաջ պահանջվող սովորական աղոթքն ասաց ու սեղան նստեց: Սպասավորները բազմապիսի կերակուրներ բերին: Շահն ընթրիքը վերջացրեց, սեղանը հավաքեցին: Մափորն ու

ժատուցարանը բերին, շահը ձեռները լվաց. սուրճ բերին—խմեց. դալլան ավին—ծխեց: Այդ ժամանակ սպասավորների պետ Ասագ-բեկը զեկուցեց, վոր շահի հրամանները կատարված են:

Շահն ասաց.

— Լավ, կարող ես դնալ:

Հետո վերադարձավ խոջա Մուբարեքն ու զեկուցեց, վոր բոլոր իրեղենները տեղ են հասցված, և ասաց.

— Շահի կինն ու աղջիկները մեծ հրճվանքի մեջ են ուղարկված իրերի պատճառով. վոչ միայն նրա մասին չեն անհանդստանում, այլ, ըստհակառակը, շատ ուրախ են այդ անհակալ դեպքի շնորհիվ: Նրանք ուրախ ու զվարի պառկեցին քնելու:

Շահն այլևս չեր անհանդստանում իր կնոջ ու յերեխաների մասին: Նա միքիչ ել խոջա Մուբարեքին ու սպասավորների պետին մանր-մուռն բաների մասին հարցուփորձ արագ: Արեկի մայր մտնելուց հետո չորս ժամ անցավ: Շահը վերկացավ ու ննջարան դնաց: Նա հանվեց ու սպասավորների պետին հրամայեց.

— Պահակապետին հրամայիր, վոր առաջվա նման բոլոր տեղերում պահակներ դնի:

Ապա վերմակով ծածկվեց ու քնեց: Ապասավորների պետն ու խոջա Մուբարեքը դուրս յեկան ու յուրաքանչյուրը դեպի իր տեղը դիմեց:

Հաջորդ որը շահ Յուսուփը ընդունելության գահինը շնորհ բերեց ու պատվիրեց մոլա Թամազանին, կուրբանքեկին, միրզա Զեմիլին ու միրզա Զեկիլին, վոր նրա բարեկամներն ելին, ու վորոնց նա ամեն բանում հավատ եր ընծալում, իր մոտ կանչել: Ավագ մոլլայի պաշտոնը նա մոլա Թամազանին հանձնեց, կուրբանքեկին զլիսավոր հրամանատար նշանակեց՝ նրան խանի տիտղոս տալով. վեղիրությունը միրզա Զեմիլին հանձնեց, իսկ միրզա Զեկիլին ֆինանսների մինիստր նշանակեց: Ավագ աստղագու-

շակի պաշտոնը նա վերացրեց, քանի վոր պետությունն ու ժողովուրդը վեասից զատ՝ նրանից վոչ մի ոգուտ չունելին: Շահը հրամայեց բոլոր գավառները նահանգապետներին հրովարտակներ ու հրամանագրեր ուղարկել, վորպեսզի նրանք չհամարձակվեն մուսուլմաններին մահվան պատժի գատապարտել, իերք որինական հիմք չլինի, չհանդիմեն իրենց սոսկ անձնական ցանկությամբ մարդկանց պատժի ու մահվան յենթարկել, նրանց քթերն ու ականջները կարել ու աչքերնին համել: Իլրումն հրամանագրի՝ յուրաքանչյունությունից վերաքննիչ եր ուղարկված՝ զավաների վիճակին ու ժողովրդի կարիքներին ծանոթանալու ու վերադառնալուց հետո ամեն ինչի մասին գեկուցաներու համար: Շահ Յուսուփն այդ վերաքննիչներին իր մոտ կանչեց ու ասաց.

— Գավաների կառավարիչներին իմ անունից հայտնեցեք, թող նրանք ալլահից վախենան, անարդարացի գործեր չկատարեն, ժողովրդին նեղություն չտան ու ցիրուցան չանեն, կաշառք չվերցնեն ու հավատացած լինեն, վոր արդորինակ վարմունքները վերջիվերջո նրանց գժբախտության ու կորստի պատճառ պիտի գառնան: Ընդհակառակը՝ յեթե գավաների կառավարիչները իրենց որինական ոտձկով բավականանան, միշտ իրենց պաշտոնում կմնան. ժողովուրդը կսկսի նրանց հարգել, թագավորները՝ գնահատել, ու նրանց աստիճաններն որեցոր կավելանան:

Այդպիսի խրատներով շահը վերաքննիչներին ազատ թողեց: Ապա հրամայեց, ննարավորության չափ, հողավարձն իջեցնել, ամենուրեք նոր ձանապարհներ շնել և այն վայրերում, ուր այդ անհրաժեշտ ե, պատվիրեց կամուրջներ ու քարվանսարաններ կառուցել: Կարգադրեց յուրաքանչյուր նահանգանոցներ ու դպրոցներ բանալ, անջրդի վայրերը ջուր անցկացնել: Վորքեալի կանանց ու վորքերին, անդամալուչներին ու կուլքերին ոգնում եր ու հովանավորություն ցուց տալիս: Նա հրա-

մալեց, վոր ամենուրեք ուստալ իրավագետների քանակը չէ բազանցի ժողովրդի նրանց ունեցած կարիքին:

Արդարադատությունը, վոր պետության ամենակարևոր դորձերից մեկն է, նա ուստալ իրավաբանների իրավասությունից ազատեց և փորձված ու հավատարիմ պաշտոնյաների համանեց, վորպեսզի ժողովուրդը դատական գործերում ամբողջովին ուստալ իրավաբաններից կախումն չունենա, նրանց իր միակ ապաստանը չհամարեց ու կառավարությունից չհեռանա: Նա հրամայեց, վորպեսզի ամենուրեք պետական հողերի բաշխումը վերապահվի հասուլ հանձնաժողովի՝ բաղկացած չորս բարեկապաշտ անձնավորություններից, վորոնք հասուլ ցուցակների համաձայն՝ յուրաքանչյուր գավառում կբաժանեն աղքատների մեջ և այդ մասին շահի դիվանատունը տեղեկագրեր կուղարկեն: Յեկ հետո՝ չինի թե աղքատներից վուժանք պետական հողերից ոգտին, իսկ ճյուղները վոչինչ չստանան: Նա հրամայեց, վորպեսզի հինգերորդ մասը չգանձի<sup>1</sup> և իմամի համար տեղի ունեցող այլ ժողովարարությունները վերացըց, վորպեսզի որհնված մարդարելի սերունդը՝ վողորմություն ուղեղով ստորացումների չենթարկվի, այլ ուրիշների նման վորեե արհեստով իրեն համար մի կտոր հաց վաստակի: Գավառներում հայտարարված եր, վոր այլև վոչվոք չհամարձակվի շահին, մինխատրներին ու պալատականներին ընծաներ տալ ու նվիրաբերություններ անել, վոր վոչվոք չձգտի այլպիսի նվերներով կառավարությունն իր կողմը քաշել: յուրաքանչյուրը պարտավոր եր իմանալ, վոր միմիայն նրա անմեղությունն ու անարատ ծառայությունն են արդարացման միջոց հանդիսանում: Յուրաքանչյուր գավառում ֆինանսական վարչությունը գավառական գան-

<sup>1</sup> Հինգերորդ մասը սկզբում պատերազմական ավարե այն մասն եր, զո՞ւրենքով հասնում եր կառավարության: Հետագայում հինգերորդ մասը զանձին պակեց վոչ միայն պատերազմական ավարեց, այլ ուրիշ հասույթներից: Պարզաբանում հնդամասը հոգուա մարդարելի սերունդների յեր գանձվում:

ձարան անվան տակ՝ հավատարիմ անձանց եր հանձնարարված: Պետական ծախսերը հատուկ հաշվեմատիաններում ելին արձանագրում և հարկ յեղած դեպքում գավառական գանձարանի հաշվին վերաբերում: Հասարակ ժողովուրդը լուրովին ազատված եր պետական ծախսերի (յեկի) մասին ունեցած հոգսից: Պետության արդյունքներն (մուտքը) ավելացնելու համար նա կարգադրեց, վոր վաճառականները, ստորին ու բարձր ազնվականությունը, շահի ազգականները, նույնպես և ուստա իրավաբանները, հոգեորականություններից հոգուա գանձարանի բաժին հանեն՝ քաղաքներում հասուլի մեկ տասներորդ, գյուղերում—մեկ քառաներորդ մասը: Հրամայված եր դորքի ու ծառայողների ողջիկը չուշացնել, քանի վոր դրա չնորմիվ պետության վեսա և համառում, այլ առանց ուշացնելու գավառական գանձարաններից տալ: Վորոշված եր, վոր կալվածների վաճառքի ու գնման դեպքում արժեքի յուրաքանչյուր թումանից հոգուա գանձարանի հինգ շահի վերցվի: Գրավականների պարտադիր վաճառքի մասին յեղած որենքը վոչընչացված եր, քանի վոր այլպիսի որենքի գյուղության դեպքում նա, ով վոր պարտք տալով գրավական եր վերցընում, շահագրգուված չեր, վոր պարտքը վերադարձնելին, այլ, ընդհակառակը, կարիքավորին ստիպում եր գրավ դրած կայքը ցածր գնով ծախելու:

Յերբ ավագ մոլլա Ախունդ-Սամադը բերդի բանտում հստած՝ տեղեկացավ, վոր իր աստիճանն ու պաշտոնը մոլլա Թամազմանին և հանձնված, վշտից հանկարծամահ յեղագի: Իսկ շահ Յուսուլի այլև հրամայեց, վորպեսզի Ղաղվինի փողոցները լայնացվեն, իսկ այն տեղերը, ուր հորեր կային, պատվիրեց ծածկել, վորպեսզի անցորդները մեջը չընկնելին: Նա գատարանի համար ազգաբնակության գանձատանը լսելու նկատմամբ կարգ ու կանոն հաստատեց, վորպեսզի Ղաղվինի ալբատ աղքաբնակությունը, տիրող

թանգության պատճառով, շահի շտեմարաններից հացահատիկ տան:

Նետո ելի շահը վերահասու ու փորձված մարդկանցից մի խորհրդակցություն հրավիրեց՝ քննելու այն հարցը, թե ի՞նչ կերպ կարելի է ջուր բերել Ղազվին, պատվիրեց նախագիծ պատրաստել և ներկայացնել իրեն ի հայեցողություն:

Շահ Յուսուֆի գահ բարձրանալուց հետո մի շարաթանցավ: Ամեն որ ժողովուրդը վկա էր լինում նրա իմաստության ու արդարության նորանոր հայտնագործություններին: Պարսկաստանի համար բարորության ու բախտի որեր վրա հասան:

Սակայն ի՞նչ ոգուած: Մարդկային ցեղը լերբեք իր վիճակից գոհ չի լինում: Դրախտում մեր հայր Աղամին ու մայր Յեկային ի՞նչ եր պակասում, վոր նրանք աստծու հրամանը խախտեցին ու գրախտից արտաքսվեցին: Մարդին այդպես ե: Ղազվինի բնակիչներն այժմ ամեն որ չելին տեսնում, թե ինչպես բերդի պատերի վրա հանցավորներ են կախում, չելին դիտում, թե ինչպես շահի հրապարակում դահիճը զլխատում եր մարդկանց, նրանց կախաղան բարձրացնում, աչքերնին հանում: Այդ նրանց համար շատ զարմանալի յեր: Սկզբում նրանք ասում եին:

— Կարծես թե նոր թագավորը շատ բարի ու մեղմ մարդ ե:

Ապա սկսեցին դատել նրա բարության ու մեղմության մասին: Նրանք՝ բնավորության հիմարությանն ու թուլությանը վերագրեցին: Բացի այդ՝ նրանք շահ Յուսուֆի մեջ հազար ազ և ազ թերություններ ելին դանում: Կարձասած՝ այդպիսի բարի թագավորի իշխանության տակ ապրելը նրանց համար շատ ծանր եր թում: Պաշտօնանակ յեղած պաշտոնյաները ժողովրդի այդորինակ արամագրությամբ ոգտվեցին և վոչ մի գեղք ձեռքից բաց չելին թողում առանց ոգուած քաղելու: Նրանցից յուրաքանչյուրի

մաքնի խոսվարարություն ու ապստամբություն եր անց կենում: շատով Ղազվինում վրովիմունք բանկիվեց:

Ապաստամբություն առաջին պատճառուը պաշտօնանակ ափոռապետն եր: Նա փողոցում նախկին գանձապահին պատահեց, նրա հետ միասին քաղլեց ու սկսեց հարցությորձ անել:

— Տեր իմ աստված, այդ քեզ եմ տեսնում, միրզա Հարիբ. հը, ժողովուրդն ի՞նչ ե ասում մեր նոր թագավորի մասին:

Միրզա Հարիբը պատասխանեց.

— Նոր թագավորից ժողովուրդն արգեն յերես ե թեքել: Այժմ նրան հիմար ու գատարկապորտ մարդ են համարում:

— Յես ու իմ ալլահը, միրզա Հարիբ, ժողովուրդը մեզնից ավելի խելոք ե: Նրանք ճշմարիտ են ասում: Տեր իմ աստված, ի՞նչ հիմարություն գործեցինք: Մի ինչ-վոր անհայտ թամբագործի գահ բարձրացրինք ու մեզ համար թագավոր գարձրինք: Ինքներս մեր գլխին փորձանք բերինք: Մեր ծառայության ու հավատարմության համար նա մեզ պաշտօնից զրկեց և ամբողջ յերկրում, վորպես շների... աստված ե վկա, չկա ավելի մեծ անպատվություն մեզ համար, քան այն, վոր մենք կըեցինք:

Գանձապահ.—Բայց չե վոր մենք նրան շահ Արքասի հրամանով թագավորի տեղ ընդունեցինք: Ի՞նչ կարող ելինք անել:

Ախոռապետ.—Ճիշտ ե: Այն ժամանակ շահ Արքասը մեր թագավորն եր. ու մենք նրա հրամաններին պիտի յենթարկելինք: Բայց այժմ, լերբ շահ Արքասը չկա, ի՞նչն ե արգելում մեզ գահընկեց անել և սպանել այդ անիծված անաստվածին, վորն, առում են, հավատում ե հոգիների տեղափոխության: Իսկ հետո մենք Սեփեկղների տնից վորեւ արքայազնի գահ կնառեցնենք, վորն իր աղնվական ծաղումով գտնին ու թաղին արժանի կինի:

Գումանապահն. Ոյս, դու լավ ես տում: Այդ բանի նկատմամբ յես քեզ հետ լիսլին համաձայն եմ: Բայց մենք յերկուսով ի՞նչ կարող ենք անել: Գնանք հրետանապետի մոտ ու նրա կարծիքը հարցնենք: Զե՞ վոր նա յել պաշտոնանկներից ե:

Նրանք յերկուսն ել հրետանապետի տունը գնացին: Հրետանապետը նրանց գալուն շատ ուրախ եր: Մեծ հետաքրքրությամբ լսեց նրանց ասածները և առեն ինչում, վոր ապատամբության եր վերաբերում, նրանց հետ համաձայնեց:

Ես ասաց.

— Բայց այդ գործը առանց հեծելազնդի պետ Բեքիրխանի գլուխ չի գալ: Մենք Բեքիր-խանի հետ սերտ բարեկամներ ենք: Մեր գործին նրան կողմնակից անելը յես ինձ վրա յեմ վերցնում: Յես նրան կասեմ, վոր այդ անսատված Յուսուֆի թագավորության որով նրա հետ ել կարող և այնպիսի գժբախտություն պատահել, վորպիսին անսպասելիորեն մեր զլիսին յեկավ: Յես հավատացած եմ, վոր այս խոսքերը կազդեն Բեքիր-խանի վրա, քանի վոր յերեկ ընդունելության ժամին շահը նրա վրա բարկացավ ու հայուեց նրան այն պատճառով, վոր նա հարբած վիճակում մզկիթ յեկալ աղոթելու համար: Յեթե Բեքիրխանն այդ բանին համաձայնի, նրա հետ կհամաձայնի նաև հետևակ գորքի պետ ֆարաջ-խանը, վորովհետև ֆարաջ-խանը Բեքիր-խանի յերկրորդական յեղբայրն ե ու նրա փեսան և վոչ մի բանում նրան չի հակասի: Իսկ դուք վոտի յելեք ու գնացեք Ղազվինի նախկին գեներալնահնգապետի մոտ ու նրան մեր կողմը թեքեք: Հետո հանձնարարեք նրան խորհրդակցել պաշտոնից հրաժարեցված քաղաքապետի ու քաղաքի թաղապետերի հետ ու նրանց կարծիքն իմանալ այդ գործի մասին:

Դավագիրները ցըմեցին: Նրանցից յուրաքանչյուրն իր գործով գնաց: Ամեն ինչ շատ շուտ գլուխ յեկավ: Յերեք-

չորս որվա լնիմացքում, ուժ հետ վոր պետք եր, բանակցեցին: Բոլորն ապստամբության մաքին համաձայնեցին ու պատրաստվել սկսեցին: Դավագիրները վորոշեցին շահի ապարանքը (պալատը) շրջապատել չորեքշաբթի առավոտ և, ներս խուժելով, շահ Յուսուֆին գահներեց անել ու սպանել: Սպա կամենում ելին Սեֆերիդների տնից նոր թագավոր դնարել:

Նշանակված որն առավոտյան, յերբ դեռ շահի ապարանքի գարպամները չելին բացվել, սպառազեն ձիավորներն ու հետևակները պալատը պաշարեցին: Շահ Յուսուֆը իմանալով այդ մասին՝ հրամակեց գարպամները շբանալ: Այդպիսի անթուզատելի գործողություններ շահ Յուսուֆն սպասում եր նախկին ավագ մոլա Ախունդ-Սամադից, գլխավոր հրամանատար Զաման-խանից, վեզիր միրզա Մուխսինից, Փինանսների մինիստր միրզա Յախյուլից, ավագ աստղագուշակից և մելյանա Ջելալ-եղ-ղինից, վորոնք մեծ ազգեցություն ունելին և ափաշկարա նրան չելին համակրում: Այդ իսկ պատճառով ել իր գահ բարձրանալու որից՝ նախազգուշության համար՝ նրանց բանտ նստեցրեց: Սակայն վտանգն այլ կողմից եր սպառնում: Շահ Յուսուֆի բարյացակամներն այդ մասին տեղեկանալով զինված ու մեծ խմբերով նույնպես սկսեցին շահի պալատի մոտ ժողովվել: Նրանք դավագիրներին գեմ առ գեմ յելան, սկսեցին նրանց խորհուրդ տալ ու հորդորել, վոր նրանք իրենց մտադրությունից յետ կենան, սակայն անոգուտ: Վոչ մի բանակցությամբ գործը չեր կարելի ուղղել: Իրար վրա հարձակվեցին, առորոշման ու արաքոցներն սկըսվեցին: Աշխարհի իսկական վերջն եր: Յերկու կողմից ել՝ վոչ գլուխ, վոչ ել հոգի ելին խնայում: Վերջապես հրացանածգությունը գաղարեց, թրերով ու սրերով իրար վրա հարձակվեցին: Արյունը ջրի նման եր հոսում: Ճակատամարտը ծայրահեղ կատարությամբ յերեքուկես ժամ տևեց: Վերջապես, շահ Յուսուֆի կողմնակիցների մեջ թուլու-

թիւն ու կազմակուծություննկատվեց, փորովհետեւ անշնորհ հակալ ժողովարդը քաղաքից կուրուս յեկավ և քիչքիչ սկսեց խռովարարներին միանալ, վորբ և վերջիններիու քառակի և ուժի աճեցման պատճառ հանդիսացավ: Այդ իսկ պատճառով ել շահ Յուսուփի կողմակիցները ջարդվեցին, և յուրաքանչյուրն աշխատում եր կովի գաշտից վորհե կերպ իր գլուխին ազատի ու հոգին փրկի: Խռովարարները հարձակվեցին ու շահի պալատի դարպանները կոտրեցին, ներս մտան և սկսեցին շահ Յուսուփին վնասել, բայց չփառն: Շահ Յուսուփը կորավ: Վումանք ասում են, վոր կովի ժամանակ իր կողմակիցների մեջն եր գտնվում, խրախուսելով նրանց իր ներկայությամբ, և սպանվել է կովում: Ուրիշները սինդում են, վոր նա աննկատելիորեն դուրս յեկավ ամբոխի միջից ու չքացավ: Կարճ ասած՝ վոչ սպանվածների մեջ կար նրա դիակը, վոչ ել այդ ուրից հետո մի ազ տեղ յերեաց: Ապատամբները շահի պարագ կործանեցին և շուկայում ցիրուցան յեղան: Նրանք բոլոր խանութներն ու քարվանսարանները թալանեցին: Հետո հրեական ու հայկական փողոցներն անցան: Անտեղ բոլորին կողոպտեցին ու տնաքանդ արին: Շատ անիրավություններ ու չարիք գործեցին: Արել մայր մտավ: Յուրաքանչյուրն իր տունն ու տեղը վերադարձավ: Խռովությունն ու հուզմունքը հանդարավեցին:

Հաջորդ որը դավադրության պարագութինները շուտով դեպի բերդ ուղղվեցին, գլխավոր հրամանատար Զամանխանին, վեզիր միրզա Մուխսինին, ֆինանսների մինիստր միրզա Յախյուլին, մելյանա Զեմալեդ-դինին և ավագ աստղագուշակին բանտից ազատեցին, պատմեցին նրանց այն մասին, ինչ վոր տեղի ունեցավ, և հարցրին.

— Սեփեկինների տան վմբ արքայազնին եք այժմ թագին ու գահին արժանի համարում:

Մելյանա Զելալ-եդ-դինն ասաց:

— Տերը ձեզ հետ: Ասացեք, այժմ ամսի քանի՞սն ե: Ախուապեան ասաց.

— Այսոր նորուարվա տասնվեցելորդ որն ե: Մելյանան ուրախացավ ու ասաց.

— Մի վշտանաք: Ապատամբությունը յերեկ տեղի ունեցավ, կնշանակե, գժբախտությունն արգեն պատահել է: Սեփեկինների արքայազններից և վոչ մեկը պիտանի չեթագավորության համար: Նրանք բոլորն ել հիմար ու կույր են: Նրանցից մեկին շահ իսմայիլ Ա-ը կուրացրեց, իսկ մյուսներին՝ ինքը շահ Աբբասը: Նրանք բոլորն ել անպետք են: Իսկ մեր թագավորը դարձալ շահ Աբբասը կլինի: Ախուապեան ասաց.

— Մենք նրա թագավորությամբ շատ գոհ ենք: Նրա ժամանակ մենք բոլորս ել լավ ելինք ապրում: Ի՞նչ ոգուտ, վոր նա զահից ու թագից հրաժարվեց և չքացավ: Այժմ մենք չգիտենք, թե վնասեղ ե նա:

Մելյանան ծիծաղեց ու ասաց.

— Նրա համար զահից ու թագից հրաժարվելու պատճառ կար: Այժմ այդ պատճառի ժամը անցել է: Մենք գիտենք, թե նա ուր ե թագնվել: Գնանք ու նրան պալատ բերենք:

Բոլորը վերկացան ու գնացին դեպի այն տունը, ուր շահ Աբբասն եր թագնվել: Նրանք վերցրին նրան ու շահի պալատը բերին: Առաջվա նման գան ու թագը ելի նրան ելին պատկանում, բոլոր գործերը հին կարգով ընթանում, ասես թե ըսկի վոչինչ չեր պատահել:

Զարմանում եմ յես աստղերի հիմարության վրա, թե ինչպես նրանք գլխի չընկան, վոր պարսիկները խաբում են նրանց: Թամբազործ Յուսուփը յերեք պարսից շահ յեղել: Պարսիկները շինծու կերպով նրան իրենց վրա թագավոր կարգեցին: Հնարավոր և արդյոք այդպիսի թիուրի-

մացություն, վոր աստղերը թուզ ավին պարսկիներին խաբելու իրենց, խորտակեցին անքախտ ու անմեղ թամբագործ Յուսուֆին, շահ Աբբասին մի կողմ թողին և նրա ըառասուն աարվա թափած արյան ու անդժությունների վրա ուշադրություն չդարձրին։ Շահ Աբբասի ստոր անդժության որինակ հանդիսացավ իր սեփական վորդու սպանությունը. նա հրամայեց իր յերկու փորդիների աչքերը հանել։ Նա ալես տղա չունեցավ։ Նրան իր թուը հաջորդեց։

Սակայն աստղերին ինչու նախատել։ Նրանք դեպի շահ Աբբասի անձնավորությունը թշնամություն չելին տածում։ Նրանք միան նոր-տարվա տասնհինգերորդ որը գահնկեց պիտի անելին նրան, ով թագավոր եր Պարսկաստանում, և դժբախտացնելին։ Այդ ժամանակ պարսկական գահին թամբագործ Յուսուֆին եր բազմել։ Այդ իսկ պատճառով ել աստղերը նրան դժբախտության մեջ ձգեցին։ Աստղերի մաքով անգամ չեր անցնում, վոր պարսիկները նրանց կիսաբեն, իսկական թագավորի փոխարեն կեղծ թագավորին կենթարկեն նրանց հարվածներին։

73658



9.5.65 20 600.